Կը զգամ թէ թախիծը պատած է ինչպէս Միաբանութեանդ նոյնպէս և Զեր սիրով, և չեմ գտներ բառեր միխթարութեան, որովհետեւ միեւնոյն վիշտը կը զգանք եւ մենք, եւ պէտք ունինք միխթարութեան. այնքան անակնկալ էր Զեր հեռազրի գոյժը, որ զմէզ վրդովեց, յուզեց և շուարեցուց, մինչ պատրաստուած էինք նորին Ս. Օծութեան տօնախմբութիւնը ուրախութեամբ և ցնծութեամբ կատարել, փառք տալով Աստուածոյ որ տարի մը ես չնորհեց մեր Ծերուանազարդ Հայրապետին, ահա Զեր հեռագիրը եկաւ, ուրախութեան տօնը տիրութեան փոխելու, փոխան Հայրապետական Մալթանքի, Հոգեհանգստեան պաշտօն կատարեցինք, ի հանգիստ հոգւոյ յոյշ սրբացական Հոգելոյս Պատրիարքին, Փետրուար 12, Կիրակոս օր միան համարձակեցայ գոյժը Վեհապատ Հայրապետին հազորդելու, և իրաւունք ունինք վարանելու, այնքան գէշ ազգեց նորին. Օծութեան, որ ձեռքը ծունկին զարնելով և արտասուաց կաթիլներ հոսեցնելով, հատկտեալ և զողդոչուն ձայնով կը կրկնէր, և նէչու կարզը չեն պահեր, ինչնու ինձմէ առաջ կ'անցնին, ես պէտք էի մեռնիլ, որ արգէն կիսամեռ եմ և նապէտք էր ապրէր, գեռ առոյզ էր, իմ տարիքիս բաղդատամբ դեռ երիտասարդ էր և գեռ կրնար երկար տարիներ ծառայել եկեղեցւոյ և Աղգին:

Եթե Ս. Պատարագի, Միաբանութիւն, աշակերտութիւն և ժողովուրդ եկան Վեհափառին աջը ասնելու և փոխան չնորհաւութեան ցաւակցութիւն յայտնելու, չը պիտի հարցնեմ զՁեզ թէ այս անակնկալ հարուածը ինչպէս տեղի ունեցաւ, պարագաները ինչն էրն, որովհետեւ ինչ որ առ բան պարագաները իրականութիւնը չեն փո-

խեր, Զեր հեռագիրը ժամը 23ին քաշուած էր, ուրեմն ցաւալի դէպքը հաւանականաբար ժամը 20ին կամ 21ին պատահած պիտի ըլլար: Զեր հեռագիրը Փետրուար 11ին ըստացանք, և փութացինք մեր թեմերուն հեռագրել: Եւ Զեզ ալ Վեհը իր ցաւակցութիւնը յայտնեց ոչ միայն յանուն Միարանութեան այլ նաև յանուն ժողովուրդին: Ողբացեալ Պատրիարքին մակը երրորդ հարուածն էր որ Կիշնէր Հայ Եկեղեցւոյ գըլլին, 1936 Յուլիս 9ին Բարձէն Աթոռուակից Կաթողիկոսը մի քանի օրուամբ մէջ կը գախճանէր, 1938 Ապրիլ 10ին՝ Հնդկանական Հայրապետն Խորէն Ա. յանկարածամահ կ'ըլլար, 1939 Փետրուար 10ին Սրուաղէմի Պատրիարքը անսկնկալորէն հրաժեշտ կուտար աշշարհի, ցաւալի է, շատ ցաւալի, թէ մեռնողներուն համար և թէ իրենց թափուր թողուցափ պաշտօններուն համար:

Սիրելի Արքազան, աղօթենք մեղմէ հեռացողներուն համար և աղօթենք որ Աստուած գթայ Հայ Եկեղեցւոյ և նոր պետեր յարուցանէ, Հայ գժերադդ ժողովուրդը հովուելու և միջիթարելու համար:

Հնդունեցէք Արքազան Եզրայր, ցաւակցութիւնս և նոյնը յայտնեցէք Ս. Յակվինեանց սգաւոր Միարանութեան:

Զեզ Վշտակից
ՊԵՏՐՈՒ ԱՐՔԵՊՈՒ. ՍԱՐՄԱՆԵԱՆ
Կրլին. Ընդհ. Փոխանորդ

ԱՌԱՋՆՈՐԴԻՌՈՒՆ ՀԱՅՈՒՑ ԼԻԳԱՆԱՆԻ

(Ուղղուած Տ. Մեսրոպ Արքազանին)

3 Մարտ 1939

Խոր ցաւ պատճառած է մեզ Երուասդէմի Երանաշնորհ Պատրիարք Տ. Թորգոմ Արքեպոս. Պուշակեանի անակնկալ վախճանումը: Այս անփոխարինելի կորուսին առթիւ վերստին կը յայտնենք մեր և Ազգային Վարչութեան Քաղաքական Ժողովի ցաւակցութիւնները, սգաւոր Միարանութեանդ:

Եզրայրական սիրոյ ողջունիւ
Մնամք աղօթակից
Կաթ. Փոխ. Հայոց Լիբանանի և
Քաղաքական Ժողովի նախագահ

ԱՌԱՋՆՈՐԴ
ԹԵՄԻՆ ՀԱՅՈՒՑ ՈՒԽՄԱՆԻՑ

(Ուղղուած Տ. Մեսրոպ Արքազանին)

14 Փետրաւար 1939

Ստացայ Զեր հեռագիրը, որով կը հազորդէիք Ս. Պատրիարք Հօր՝ Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Պուշակեանի անակնկալ մահ, որ տեղի է ունեցել ուղեղի կաթուածի պատճառով, ամսի 10ին, Արքաթերեկոյեան: Անհուն վիշտ պատճառեց ինձ այդ անսպասելի կանխահաս մահը: Բոլոր հոգուովն շշտակից եմ Զեզ և Զեր միարանական ուժմտին:

Կիրակի, ամսիս 12ին, խուռան երկսեռագմութեան ներկայութեան՝ ուղրը և անմահ պատարագ մասուցի, գամբանական խօսեցի և հոգեհանգիստ կատարեցի հանգուցեալ Պատրիարքի հոգւոյ փրկութեան համար:

Կ'ազօթեմ ջներմապէս առ Աստուած, որ, կարծ ժամանակի ընթացքում, ընտրուի արժանաւոր յաջորդ՝ ի հոգեսոր միմիթարութիւն համայն Հայութեան և Եկեղեցւոյն:

Եզրայրական ողջունիւ
Աղօթակից
ՅՈՒՄԻԿ ԱՐՔԵՊՈՒ. ԶՈՀՐԱՊԵԱՆ

(Ուղղուած Տ. Մեսրոպ Արքազանին)

Նիւ-Եսրի, 19 Մարտ 1939

Հոգեկան խոր վշտի զգացումով է որ տեղեկացանք Ս. Աթոռոյդ Ամենապատիւ Պատրիարքի, Տ. Թորգոմ Արքազանի մահուան մասին, որ որքան անակնկալ, նոյնքան ծանր ու մեծ կորուստ է ոչ միայն Աթոռոյդ և Միարանական Ուխտիդ համար, այլ և համայն Եկեղեցւու համար:

Այդ կորուստն ու անդարձ մեկնումը աւելի ևս զգալի, ցաւալի և անփոխարինելի է մանաւանդ այժմ, մեր անել կացութեան պարագալին, երբ Մայր Աթոռն այրիացած իր գահակալի նոյնքան անակնկալ մահով, այժմ ևս մի այլ Աթոռ է սգոյ քոզն զգնում:

Ընդունեցէք իմ խոր, ի սրտէ, հոգեն կան անուն տառապանքի ձայն ցաւակցութիւն այս առթիւ անձնապէս և հաղորդեցէք նոյնը և Միաբանութեան բոլոր անդամներին, արիութեամբ կրել այս նոր ծանր խաչը ան կենաստու և բուժիչ յոյսերի աւկընկալութեամբ, որ Տիրոջ Աջն ու Մատը պիտի արժանաւոր յաշօրգը նշէ Մեկնողի առ Արարին իւր:

Եղբայրական սիրով եւ ազօթանուէք վշտակցութեամբ՝

ՏԻՐԱՅԹ ԱՐՔԵՊՈՂԱԿԱՊՈՂԱ

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

ՀԱԼԻՔ

(Ուղղուած Տ. Մեսրոպ Մորավանին)

17 Փետրար 1939

Երբեք չէի խորհիր որ այսքան կարճ ատենի մէջ, իրարու ետևէ, գէթ վերջին ինը տարիներուն, այսքան ցնցող կորուստներ պիտի արձանագրէինք:

Մահաց, զարհուրելի վիշտապի մը պէս, հետզհետէ մտաւ ԱնՏիիլիսափ, կիմիածնի ու Ս. Յակոբայ երկաթեայ դուռներէն ներս, ու հնածեց անոնց գահակալները, ու ահաւոր պարապութիւններ թողուց հոն: Այս մէկը կարծէք աւելի ծանր ննչեց, վասն զի երաւասալէմի Առաքելական Աթոռը, ողբացեալին գահակալութենէն ասզին նընհանրապէս ու Վեհափառ Խորէն Ա. ի մահէն յետոյ մասնաւորապէս, Հայաստանին դուրս պարող վարատական ու պանդուխտ Հայութեան համար գարձեր էր յոյփ և լոյփ անշեղ փարոսը, ու Սփիռուքի Հայութեան ազգային բոլոր խորհուրդներն ու ծրագիրները, զարժանալի համագրութեամբ մը, որուն մէջ ո՛չ մի բռնի ճիգ նշմարեր էինք սակայն, Հայ Սիոնի մէջ կը կերպաւորուէին: Սիոն, իր թանկագին գահակալով, զարձեր էր հուռութք մը ու եղեր էր Հայ Եկեղեցւոյ սոկենուն խօսնակը:

Իրա՞ւ լոեցին բոլոր ասոնք. չեմ կարծեր: Երեն ու իր մեծանուն նախորդին հոգւոյ հարազատ կաթովը սանած որդիներ անշուշտ որ պիտի փոխարինն զիրենք, նոյն-

քան անժխտելի արժանիքներով, տարիներ յետոյ, երանի թէ ընդունած ըլլայի Զեր սիրելի եղբայրութեան այնքան անկեղծ ու սրտագին հրաւելը, ու այս տարիի աւ այցի դայի Հայ Սիոնին, տեսնելու զինքը վերջին անգամ: Կ'երեայ թէ Տէրը ուզեց խընայել ինձմէք իր հոգեվարքն ու կահծափ մակը տեսնելու գառն բաժակը: Այստեղ կրած վիշտը անկէ տարրեր չեղաւ սաւկայն, երբ Սահակ Պարթենի տօնին Շաբաթ առաւուն, կանուխ, ստացայ Զեր գումակն հեռագիրը, փղձկեցայ ու ըսի. բայց Տէր, այս մէկը գէթ թողէիր ժամանակ մըն աւ, մինչեւ որ հասնէին իր ու իր նախորդին նոր ցանած պատուղները: Թող օրհնեալ ըլլայ իր կամքը:

Եղիշէի, Բարգէնի և Խորէնի մահէն յետոյ, այս մէկը գէթ մնայի: Որդեսէր հայրը Դուռեն, կարծեն իր մօտ ակրել ուզէր իր սիրելի զաւոները, մի առ մի:

Յանկարծ աչքին առջեւ պարզուեցաւ երկու քուկէս տարի առաջ Անթիլիսաէն Պէյրութ տանող ու գեղեցիկ կանաչներուն մէջ ձգուած ճամբան, որուն վրայ ինքը հանգուցեալը, Զաւէն Սըրազանով ու բազմաթիւ յուղարկաւորներով ու լացոներով, կը հետեւէնք հէք Բարգէն Կաթողիկոսի դագաղին: Միտքեեկաւ յանկարծ որ Նահրի Ս. Քառասուն Մանկանց եկեղեցւոյ մօտակայ ուրիշ հայ մատրան մը փեղկերը փակուած էին ու զանգակին լեզուակը համբ դարձած էր այդ պահուն: Չուզեցին որ այդ դառն սուզը կրող հանգուցեալին համար համբ մային ձալէպի քրիստոնեայ եկեղեցիներու զանգակները: Եւ ինչ քաղցր մը խիթարութիւն: բոլոր եկեղեցներու Հոգեւոր Պետերուն եղած յայտարարութեան վրայ, Շաբաթ առաւօտ, ժամը ճիշդ 10ին, մեր Ս. Քառասուն Մանուկ եկեղեցւոյ մեծ զանգակին հետ անընդհատ կէս ժամ հնչեցին քաղաքիս բոլոր քրիստոնեայ եկեղեցիներու զանգակները և Հայէպի բոլոր մետարպալիսները հետզհետէ Առաջնորդարան հասան, իրենց ցաւակցութիւնը յայտնելու բոլորին համար սիրելի հայր մը եղող Թորգոմ Սըրազան Պատրիարքի մահուան առթիւ:

Ս. Քառասունից պատմական եկեղեցւոյ գեղակերտ աթոռը իսկոյն ծածկուեցաւ սև շղարշով ու սև քողի տակ երեք սիրու-

կանթեզներ սկսան պլազմալ հանգուցեալի լուսաւոր միտքին իր նշանակ, ու պիտի պլազման մինչև որ լրանայ անոր մակուան քառասունքը:

Այսօր Վարդանանց Տօնն է, ազգային ուրախութեան օր, որ փոխակերպուեցաւ սուգի: Ժամը 9ին Արժ. Տ. Յովհաննէս Ա. Քհն. կթմէքնեան պատարագեց Ս. Քառասունից եկեղեցւոյ մէջ: Տաճարը, հակառակ կիրակի չըլլալուն, լիցուն էր. Հայրապետական Աթոռը ողբացեալին մահուան յաջորդ օրն իսկ սև շղարշներուն մէջ առնուած էր, ու այդպէս պիտի մաս մինչև քառասունքը լրանայ: Հանգստանան կարգը աւարտելուն, խօսեցանք դամբանականը, որ սովորական փնտագրութեան մը սահմանէն դուրս, աւելի ներքոց մը եղաւ հանգուցեալ Պատրիարքին լուսաւոր կեանքին, կը խորհիմ որ քրիմէ յետոյ իր աշակերտներն աւ պիտի գիտնան յարգել իրենց սիրելի Հօր յիշատակը, ու անոր մարմարեայ տապանաքարին չորս կողերուն վրայ պիտի քանդակել տան Արժաշը, Սեբաստիան, Եգիպտոսն ու Ս. Երուսաղէմը: Հազարաւոր բազմութիւն մեղի հետ մաղթեց որ Տէրը պահէ ու պաշտպանէ Առաքելական Աթոռոն ու Ս. Յակոբեանց Միաբանութիւնը, միսիթարէ բոլորդ Զեր անտանելի սուզին մէջ ու պատեհութիւն տայ արժանաւոր յաջորդով մը վերցանելու սուգի քօթը:

Եկեղեցց գրան մաս ընդունեցայ բոլորին ցաւակցութիւնները: Այս կորուսաը շատ խոր ազգեց Հալէպի վրայ:

Կ'զգամ թէ, Սրբազն եղբայր, որքան խոր է ձեր վիշտը երբ այնքան կարճ ատենի մէջ Գուրեանէն յետոյ Թորգոմ Սրբազնն աւ կորսնցուցիք: Աչքիս առջևն են իր հոգերո որդիները, իր աշակերտները, անմեղ ժառանգաւորներն ու հոգեսէր միաբանները, որոնց աչքերէն հոսած արցունքները հոգւոյն մէջ կը կաթին կարծես:

Յատկապէս կը խորիմ առիթով մը իմ սրտագին ցաւակցութիւններս յայտնել Ուժատիդ բոլոր անդամներուն, մինչև աշակերտներուն:

Հաւատգոյն բարեմալթութիւններով և եղբայրական սիրոյ ողջունիւ

Վշտակից

Առաջնորդ Հայոց Բնիքոյ Թեմին
ԱՐՏԱՒՐ ԱԶԴԻ ԱՐԴԻ ՊԻՍԱԿՈՂՈՂՈՒ

ՄԱՅՐԱՎԱՆՔ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
ՎԵՆԵՏԻԿ - Ս. ՂԱԶԱՐ

(Ուղղուած Տ. Մեսրոպ Սրբազնին)

27 Փետրար 1939

Միսիթարեան Միաբանութիւնն սրտի ամենախոր վշտով լսեց յեղակարծ քօթը ողբացեալ Ամենապատի Թորգոմ Ս. Պատրիարքին: Կամակայ թարգմանն է մեր սուզին գրը կը խանձնենք համազգային մեծ ցոյցերուն՝ հանգէպ Ս. Յակոբեանց սպաւոր Աւղագիտ և իր մէն մի անդամին:

Գիտակ ենք արդարեւ թէ մեծ կորուստ մուռնեցայ յանին ողբացեալ Պատրիարքին ոչ միայն Սաղիմեան Միաբանութիւնուն, այլ նաև ազգին մեծագոյն զանգուածը, զըրկուելով պատկառելի և բանիքուն եկեղեցականէ մը և սիրուած Հայրապետէ մը:

Եւ այս կորուստը այնքան աւելի ծանր կը գանձայ, երբ նկատուի որ անզին թափուր կը մնայ էջմիածնի Աթոռուն ալ ողբացեալ կորէն Ա. Կաթողիկոսի տիտուր մահով:

Վստահ եղիք, Սրբազն Տէր, որ անպական պիտի ըլլայ մեր աղօքէս հանգուցեալն հոգուն համար, ինչու նաև մեր խնդրութեք Աստուծմէ՝ յարուցանելու նոր սրբակոն և առաքելաշան հովիները, մեր Սուրբ Հայրերու հաւատքով յօգուտ մեր տառապեալ և սիրելի ազգին:

Մնամ սպակից և աղօթակից
ՄՐԱՊԻՌՆ Վ. ՈՒՂՈՒՀԱԾԵԱՆ
Հնդին. Աբբայ Մխիթարեան Միաբանութիւնն

(Ուղղուած Տ. Մեսրոպ Սրբազնին)

Վիեննա, 15 Փետրար 1939

Այս առաւօտ Համբուրգէն գրուած նամակէ մը կ'իմանամ թէ ի Տէր հանգուցեալ է նորին Սրբազնութիւնն Պատրիարք Հայրը:

Կը զգամ մեծ կորսաւը, զգը ունեցաւ Ս. Աթոռու մահուամբ գիտնական, գործունեայ և բարեհամբաւ Պատրիարք Հօր: Անհունորդ գագածուած եմ: Կը փութամ յայտնել Միաբանութեանց իմ ցաւակցութիւնն: Տէր հանգեցաւ մեծարդիւն Պատրիարք Հօր և ըն-

սիր յաջորդ մը՝ Պատրիարքական Աթոռին
վրայ:

Մատչելով ի համբոյք Ս. Աջոյ Արքիա-
պատութեանդ, կը յայտնեմ, թէ եմ

Սրբազնութեանդ ն. ծ.
Հ. ՆերՍէՍ ՎՐԴ. ԱկինեԱՆ

(Ուղղուած Տ. Մեսրոպ Սրբազնին)

Անքիլաս, 11 Փետ. 1939

Զայն գուժեաց ի Ալիոնէդ . . . Զայն
ահաւոր սուզի և ողբի անհանդուրքելի . . . :

Ս. Աթոռիէն Անթիլիասի կաթողիկոսա-
րանին տրուած հեռագրէն խորին ցաւով ու
ցնցումով իմացալ Ս. Աթոռիդ հանճարեղ
և զեհաշուք Գահակալին, ողբացեալ ծ.
Թորգոմ Սրբազնին անակնկալ և դառնա-
կուիծ մահը:

Ահ, իրաւ է որ ոչ ես է Առաքելա-
կան Ս. Աթոռիդ պատուական ու աննման
պատրիարքը, Հայ. Եկեղեցւոյ աւելիսուիկ և
մարգարեացունէ խօսնակը, Հայ Բնմին հո-
գեշունչ, հոգեզմայլ և գուշակ քարոզիչը,
ԱՄբակիս ճոխանիս, խոնամիտ և ուղիա-
րան քրաքէտ-խմբագիրը, և իմ սիրելի,
գորովալի և անմոռանալի դասընկերս եւ
Հոգույն Սրբոյ բազմազան չնորներով առ-
լցուն օծակից եղբայրո (ի վարդապետու-
թեան):

Այս անակնկալ և անհաւատալի, սահ-
մբակիցուցիչ եւ ընդվլեցուցիչ, դասնա-
կուիծ ու անողոք իրողութեան առջև —
որ ահաւոր սումբի մը պէս հմեմբէն սար-
սեցուց կաթողիկոսարանին նորակառոյց
Մայր Տաճարը և թունդ հանեց Կիլիկեան
միաբանութեան և համայն ժողովուրդին
միաքերն, սիրտերն և հոգիներն միանգա-
ման. — չեմ ուզեր, կ'զգուշանամ մանր
եւ երկար խորդածել (գուցէ չկարենամ
զսպել վրդովեալ միտքս և տկար գրիս . . .):

Միայն արասաւաթոր աչքով և բեկ-
եալ սրով խոնարհելով առաւածային ան-
իմասալի և անհասանելի կամքին առջև,
ի բոլոր սրտե կը ցաւակցի Տեր Սրբազ-
նութեան և Ս. Յակոբեանց սրբառուն եւ
սպաւոր Միաբանութեան: Կը մաղթեմ, սըր-
սովին, հանգիստ և լոյս հանգուցեալին հո-
գեույն և փառաց անթառամ պասկ ողբա-

ցեալ Ս. Պատրիարքին ճառագայթող եւ
անբիծ ճակտին, Հոգւորն Սրբոյ միմիթա-
րութիւն և կեանք երկար՝ Ս. Աթոռուիդ
սրտաբեկ և վշտակիր Միաբանական դասին:

Տէրը անշարժ և անսասան պահէ Հա-
յաստանեայց Ս. Եկեղեցին և Առաքելական
Ս. Աթոռոդ, և շուտով վերցնէ անոր գրայէն
սուզի և տրտութեան քողմ՝ վաղլնդփոյթ
չնորհելով Ս. Յակոբեանց Աթոռոյդ արժա-
նաւոր Գահակալ մը:

Ողջունիւ, սիրով և յարգանոք մասի
շեզ վշտակից-աղօթակից

ի. ծ.

ՓԱՌԷՆ Ծ. ՎՐԴ. ՄԵԼՔՈՒՆԵԱՆ

(Ուղղուած Տ. Մեսրոպ Սրբազնին)

Անքիլաս, 12 Փետ. 1939

Երէկ մինչ կը պատրաստուէինք Վեհ.
Տ. Մահակ Հայրապետի անուան տօնը կա-
տարելու, յանկարծ շանթի մը պէս պայ-
թեցաւ թօթը Տ. Թորգոմ Սրբազնի մահ-
ուան:

Ո՞վ կը սպասէր նոր սուզի մը՝ երր
տակաւին այնքան թարմ էր Վեհ. Տ. իո-
րէն Կաթողիկոսի կորստեան կոկիծ մեր
սրտերուն մէջ:

Ս. Յակոբեանց Միաբանութիւնը, հա-
զիւ թէ մոռցած իր նախորդ մեծանուն պե-
տին կորուստը, ահա գարձեալ կը տեսնէ
Առաքելական Աթոռը թափուր և սպաւոր:

Երբ մտքին առջև կը բերեմ մահաւանդ
քաղաքական գժուարութիւնները Ս. Եր-
կին, Ա. Տեղեաց նորոգութեան մեծ եւ
կնճառու խնդիրները, և ահարկու վիշապը
պարտին, որ մղձաւանջի մը նման ծան-
րացած է Միաբանութեան կրծքին, Կ'ըմ-
բըռնեմ խորութիւնը այն վշտին՝ որ կը հա-
մակէ Ս. Ուխտիս մերձաւոր և հեռաւոր
րոլոր անդամները:

Այնպիսի շրջանի մը մէջ երբ Հայ Եկե-
ղեցւոյ եպիսկոպոսական գասը իր կորսըն-
ցուցած արժէքաւոր անդամներուն սեղը
յաջողապէս լեցնելու դիւրութիւններէն
զուրկ է, Թորգոմ Պատրիարքին նման ներ-
կուն գէմքի մը անհետացումը կը դառնայ
զգալի կորուստ մը Հայ Եկեղեցւոյ համար:

Ի՞նչ կրնանք ընել, բայց եթէ մազ-
թել որ Ամենակալն Աստուած ողորմի մեր

Մայրենի Եկեղեցւոյն, և մեր սուքն ու տըրաւմութիւնը չուտով փարատելով նոր կեանք և պայծառ օրեր պարգևէ Մայր Աթոռոյն Ամենայն Հայոց, և Առաքելական Գահուն Ս. Յակոբեանց :

Զեր Բարձր Սրբազնութեան և պատուարժան Միաբանութեան ցաւակից ու սըդակից, և Ս. Աթոռոյ պայծառութեան հանապազ աղօթող,

Խ. Ճ.

ՆՈՐԱՅԻ ՎՐԴ. ՊՈՂԱՔԵԱՆ

(Ուղղուած Տ. Մեսրոպ Սրբազնին)

Բարից, 13 Փետ. 1939

Չափազանց տխուր առիթով մըն է որ կը կատարեմ ուշացած պարտքս Զեր Սրբազնութեան գրելու :

Խոնարի որդիքական ցաւակցութիւններս, զգացուած՝ սրտի խորերին: Ա. Աթոռոյ զարձեալ այրի, երբ արդէն այրի էր Մայր Աթոռոյը, անսպասելի զժբախտութիւն մըն է, երբ ամէն տեսակիտներէ աննպասա ժամանակներու մէջ կ'ապրինք: Վախճանման մանրամասնութիւնները կը սպասեմ իմանալ Սիոնին: Մեր մեղքերուն համար է կ'երեի՞ որ Աստուած հարուած հարուածի վրայ կուտայ մեր Եկեղեցին: Ամէնուս սուզին համար, Սրբազն Հայր, կը հայցեմ երկնային միկիթարութիւնն: Կը մաղթեմ Ս. Աթոռոյ հաստատութիւնն:

Զեր Սրբազնութեան և Միաբանութեան մտածութերուն բոլորովին անտեղեակ եմ. բայց կը խորհիմ բնականաբար՝ որ զարձեալ Զեր Սրբազնութեան վրայ պիտի իյնայ Ս. Աթոռոյ զեկը ձեռք առնելու ուժուարին պարտականութիւնը, որմէ պէտք չէ ընկրկիք, Սրբազն Հայր, ապաւիններով աստածային օժանակութեան: Զեզի կարողութիւն և ուժ կը մաղթեմ որ տայ Ամենակալը:

Ի գէմս Զեր Բարձր Սրբազնութեան ցաւակցութիւններս կը յայտնեմ ամբողջ Միաբանութեան սիրելի եղբարց, և մասմ Զեր Ս. Աջոյն ի համրոյր

Սգաւոր խոնարհ ծառայ .
ՏԻՄԱՆ ՎՐԴ. ՆԵՐՍՈՒԹԵԱՆ

(Ուղղուած Տ. Մեսրոպ Սրբազնին)

Գրալիսէն, 15 Փետ. 1939

Անհուն վիշտով լսեցի մեր ամենասիրելի պատրիարք, Ամեն. Տ. Թորգոն Ս. Արքեպոս. Գուշակեանի անակնակալ ու կըսակալ մահուան գոյժքը:

Անցեալ Ուրբաթ, ամսոյս 10ին, մեր հոգաբարձութիւնը ստացաւ իր վերջին պաշտօնաթիրը՝ ի պատասխան իրենց չնորհակարութիւնը գրեին. Նորին Ամենապատութիւնը ա'յնքան հայրական սիրով ու գորովով կը բաշխէր իր օրինութիւնները Փրաւիտէնսի հոգաբարձութեան ու ժողովրդեան՝ որ ամէնքն ալ երախտապարտութեան և ուրախութեան զգացումներով լիցուեցան: Սակայն, ինչ գժբախտ զուգագութիւն, միենոյն օրը, կէսօրէ վերջ, ժամը 4ին, Պատունէն, ՎՊայքարի խըմբագրատունէն հեռաձայն մը ցաւով կը գումարէր ինձի՞ Նորին Ամենապատութեան յանկարծական վախճանումը:

Զէի կրնար գուշակել՝ թէ ինչ հրանդութիւնէ վախճանած էր արդեօք Նորին Ամենապատութիւնը, վասնդի, հրանդութեան որ եէ կասկած չկար. ընդհակառակն, նեղպատուն վերադարձէն յետոյ, աւելի կազդուրուած էր, ինչպէս կը գրէր «Սիոն»:

Երէկ, մեր առաջնորդաբանէն պաշտօնագիր մը ստացայ, որ կը հաստատէր մահուան չարազէտ լուրը, Զեր Սրբազնութեան հեռագիրին վրայ, որուն մէջ ուղեղային արիւնանոսութեան կը վերագրուի անակընկալ մահէն Նորին Ամենապատութեան:

Առաջնորդաբան Տեղապահ կը յանձնարէ Ամերիկանյ Եկեղեցիներուն՝ ութօրեայ սուզ կատարել, ու գալ կիրակի, Բուն Բարեկենցանին՝ մասնաւոր հոգեհանգստան պատարագ մատուցանել, և քարոզի նիրթ ընծայել հանգուցեալ Ս. Պատրիարքի Եկեղեցանուէր ու ազգօգուտ կեանքը: իրեւ առաջնորդ և պատրիարք Երուսաղէմի:

Անցեալ կիրակի ես հոգեհանգստան պաշտօն կատարեցի. ինչպէս, պիտի կատարեմ յառաջիկայ կիրակի:

Ս. Հայր, գիտեմ թէ Զեր Սրբազնութիւնն ու մեր բովանդակ Միաբանութիւնը անմիթար սուզի մէջ է, վասնդի, ես ալ

միւնոյն սուզգին մասնակից եմ։ Մանաւանդ գուշքը որու ուսիրուն կը ծանրանայ նուիրական պարտականութիւնը։ Աթոռոյ առաջնորդութեան գործին, որուն համար երկնական գժանակութիւն կը մաղթեմ Զիրք Սրբազնութեան։

Կարաքվէք վշտալի սիրոոյ կը ցաւակցիմ Զեզիք, Ս. Հայր, ու ի սրտէ կը մաղթեմ որ բարութեանց Տէքը ի Ս. Հոգույն ասաուածային միսիթարութիւնը չորոշէ Զեզիք, ու Ս. Յակոբեանց Առաքելական Աթոռոյ ժրաշխան Միաբանութեան։

Եւ կազօթեմ որ Աստուած արժանաւոր գաւակալ մը բարձմեցնէ Տևառնեղրօն Առաքելական Աթոռոյն վրայ։

Մազթելով Զեր Սրբազնութեան կարողութիւն, մատչիմ ի համբոյր Ս. Աջոյդ

Ազօթակից

ՍԻՐՆ ՎՐԴ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Միտքան Ուխտին Ս. Յակոբեանց

(Ուղղուած Տ. Մեսրոպ Սրբազնին)

Լու-Աննելու, 13 Մարտ 1939

Անպատմելի է վիշտը զոր կրեցինք մակուամբը մեր սիրելի պատրիարքին, Թորգոմ Արքքայիսկոսոս Գուշակեանի։

Յանկարծահանա այս ամբան տիսուր դոյմը կարեքվէր խոցուսեց մանաւանդ սիրամբը Միաբանութեան անդամոց, որոնք մասնաւորաբար կը զգան զառնաղէտ կորուստին ամբողջ մեծութիւնը։

Տակաւին մեր աչքերը չորցած չէին արտասուքի, ոչ իսկ մեր միտքը հաշտուած այս մեծ կորուստին հետ, որ ինն տարիներ առաջ սուզով պատեց Սրբոց Յակոբեանց վանքը, այսօր, ահա, իր արժանընտիր յաջորդին և սիրելի աշակերին եղբական մահուամբ, աղջոն ու եկեղեցին կողքան դարուն մեծագոյն եկեղեցականներէն մին, մեծ գրագէտ մը, խոհական և լուրջ մտածող մը, զմայելի գրիչ մը և ներհուն մտաւորական մը։

Խորապէս կը վշտակիցիմ Սրբազնութեանդ և վշտահար միաբանակից հարց եւ եղբարց։

Յաւիտենական խաղաղութեան հանգիստ իր հոգույն և Տիրոջ միսիթարութիւն ազգին և եկեղեցւոյն։

Մատչիմք ի համբոյր Ս. Աջոյդ Սրբազնութեանդ Որդիական խորին ակնածանօք

Մնամ վշտակից Միաբան Ս. Արուոյն եւ Հոգեւոր Հովհան Հայոց Լու Աննեկրսի ԴեղԱՄ ՎԱՐԴ. ՔԱՍԻՄԵԱՆ

(Ուղղուած Տ. Մեսրոպ Սրբազնին)

Մարտի, 15 Փետ. 1939

Շարաթ (11 Փետր.) առաւօտ կանուխ ասիր երանաշնորհ Տ. Թորգոմ Ս. Պատրիարք Հօր վախճանը գուժող Զեր հեռազիլը։

Սիրաս միմոց կողիձէն ։ Սէքերս աղբերացան Մինակ մասցի խուցոց մէջ, հոստացաց էի Թուլան երթաւ ։ Այլայլած տրամադրութեանս մէջ մանցայ պատրաստուիլ ։ Մեկնելէս առաջ հանդիպեցայ Մայր եկեղեցւոյ վարչութեան ատենապիտ Պրն. Արամ թէքէեանին եւ հեռաձայնով իմաց տուի եղբօրը՝ Տիրան թէքէեանին։ Մարտէլի լաւագոյն բարեկամեմբը՝ մեր հանգուցեալ Ս. Հօր։ «Հայ Միտքանին և մի քանիներու նամակներ գրեցի։ Կիրակի առաւօտ միայն Թուլանի մատրան մէջ պատրագելով՝ գամբանական քարոզ խօսեցայ և հոգեհանգիստ կատարեցի։

Շատուր են ինծի ցաւակցութեան եկողները — քահանայք, բարեկամք, համազգի հոգեւոր ներկայացուցիչներ։ Անոնց ամէնուն վշտակցութիւնն ու բարեմաղթութիւնը այսու որդիաբար իրք միաբան Ս. Աթոռոյ կը մասուցանեմ Զեզիք՝ մատչելով ի համբոյր Զեր Կիրապատութեան Ս. Աջոյն, և շշաւակցութիւնն կը յայտնեմ Զեզ և մեր Միաբանութեան բոլոր հարց և եղբարց։ Աստուած Լուսաւորէ իր հոգին և արժանի ընէ զինք երկնակին փառքին։ Աստուած յաւերթացնէ և փառաւորէ իր յիշատակը։

Ս. Հոգին միսիթարէ և առաջնորդէ զԶեզ և Զեր սպակից զաւակներս, խորհուկներ և գործելու ըստ հանոյից կամացն Աստուծոյ, յօգուտ Ս. Աթոռոյ և ի պայծառութիւն Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ, որոյ և Սրբազնութեանդ մնամ որդի և ծառայ

Խոնարհ աղօթակից ԶԻՐՆ ՎՐԴ. Տէր ԱԱԿԱԲԵԱՆ Միաբան Ուխտին Ս. Յակոբեանց

(Ուղղուած Տ. Մեսրոպ Սրբազնին)

Խարբին, 1 Մարտ 1939

Սրբի անհուն կովկասով լնդունեցի Փետրատաւ 10 մահագործ հետագիրը Սրբազն Պատրիարք Հօր, նոյն հաղորդեցի հուագրաւ ամիջապէս, Մանկությունի և Զինաւառանի այլ կարելոր քաղաքները վտարանդեալ մեր ազգայնոց և լնդունելով փոխադարձ ցաւակցական հետագիրներ և նամակներ տակաւ առ տակաւ, անհատներէ և ազգային մարմիններէ, անհարժանարար թարգմանը կը հանդիսանամ Մայրագոյն Սրբելքի Հայ գաղութին զգացած ծանր վշտին ու ցաւակցութեանը՝ Դատուորէն արտասուեցինք հօտ և հովիւ, ազգին և եկեղեցոյն անփոխարինելի կորուստը: Նոյն օրն իսկ, հանգստան պաշտօն կատարեցի, իսկ յաջորդ օրը, Կիրակի, պատարագեցի և յշնթաց Ս. Պատարագի, մաշուո գիրքէն ետք, Հանգստան կարդ կատարեցի կրկին և դամբանական խօսեցայ յուզեալ սրտով: Ամբողջ հայ գուութը, բաւական թուով առ օտարներ գութեացած էին պատրագի, իրենց ցաւակցութինը յայտնելու համար:

Հայ ժողովութը արտասուալից աչօք հետեւցաւ ամրոգջ պատարագին և մանաւանդ դամբանականին, բոլորին սրտերը փղձկեցան իմինսի հետ: Տեղական երկու Ռուս լրագիրներու մէջ ալ Ս. Պատրիարք Հօր կենդանազիրն ու համառօտ կենսագրական ծանօթութիւններ ու մահուան ազգեր տապարուեցան, որոնցմէ մէյ մէկ օրնակ զրկեցի Ս. Աթոռ, ինչպէս նաև երկու անգլիերէն լրագիրներուն տուած էր կենսագրական կարճ տեղեկութիւններով Քէոդիկորդին:

Կը զգանք ազգովին, Սրբազն Հայր, կորուստին մեծութիւնը, երբ մանաւանդ նկատի կ'առնենք ճգնաժամային այն վիճակը, որուն հնթարկուած է այժմ Հայաստանեաց եկեղեցին, ուր կը պակսին կորովի և ճարտար ձեռքեր, իմաստուն նաւապեսներ, անսայթաք քարելու համար եկեղեցոյն զեկը: Օրնեալ լինի Տէրոջը կամքը, Կը զգամ նմանապէս Սրբազն Հայր, ձեր ծանր վիշտին հետ, ձեր ուսերուն վրայ ճնշող պարտականութեան բերին ծանրութիւնը:

Ձեր Սրբազնութեան կը մաղթեմ առողջութիւն և քաջութիւն, յամենայի և յամենայն ժամ, ամոքելու և միմիթարեկուու համար ձեր զաւակաց անպատում վիշտն ու թափիծը: Սրտասահմանի ամբողջ Հայութեան ուշադրութիւնը Ս. Երուսաղմբին է ուղղուած, լիայու եմ որ Տեղան օգնականութեամբ պիտի չվրիպեցնէք քաղցրորէն Ս. Աթոռ յառած նայուած քնիրը. սուզի օրերէն ետք յոյսի աստղը պիտի ծագի նորէն մեզ՝ ի Ս. Սիռնէս. իսկ զիս՝ տարակայս՝ անտէրուն չէք թողուր անշուշտ Սրբազն Հայր, որ միշտ կամ և մնամ Ռւխտիս և եղբայրութեանս բարեյու և բարեջան արդեանց գործոց հետամուտ և հետաքրքիր: Այո՛, սուզ էտ կրկին Երուսաղմէս սուզին մեզ պատեց մեր բարորն սրտերը համակ, բայց կը հաւատամոր որ Տէրը պիտի այցելէ նորէն փոքու հօտին Լուսաւորչի: Նա, որ կը հարուածէ և կը բժշկէ. օրնեալ լինի կամքը Տեղան, պահէ Ձեր Սրբազնութեան և ամբողջ Միաբանութեան կեանքը ի փառս Աստուծոյ և ի պարծանս Ազգին:

Մատչիմ արտասուաք ի համբոյր
Ս. Աջոյդ սպակից որդիդ
ԱՍՈՂԻԿ ՎՐԴ. ՂԱԶՄԵԱՆ.

(Ուղղուած Տ. Մեսրոպ Սրբազնին)

Նիկոլայ, 11 Փետր. 1939

Խորին ցաւով և յուզումով լսեցինք յանկարծական մահը մեր սիրելի Սրբազն Պատրիարք Հօր, որով գարձեալ Երուսաղմէի Ս. Աթոռին թափիուր գահը և Միաբանութիւնը իր սուզի քութը կ'զգենու:

Այդ անակնկալ գուժը նոյնքան տրամութեամբ համակեց նաև Կիպրոսի փոքրիկ Հայ գաղութը, որ գիտած է միշտ իր գուրգուրոս նայուած քնիրով դիտել Երուսաղմէի Ս. Աթոռն ու իր բարեխնամ Պատրիարքը: Ըստի թոյլ տուէք որ իմ անմիտթար սուզին հետ Կիպրոսի Հայութեան ցաւակցութիւնը ևս միացնեմ Միաբանութեան սուզին ու ցաւակցութեան, աղօթելով հանգուցեալ Ս. Պատրիարքին համար և խնդրելով բարձրեալ Աստուծմէ որ արժանաւոր յաջորդներ յարուցանէ: իր տա-

ռապահ հօտին զոր ոչ երրեք թողու ի ձեւ-
ռանէ: Մատչելով ի համբոյը Ս. Աջոյդ
Մնամ սպակիր որդի՝
ՊԱՐՈՅՑ ՎՐԴ. ՄինԱՍԵԱՆ
Առաջնորդական Փոխանորդ

(Ուղղուած Պատրիարքարանի)

Բոլոսամ, 16 Մարտ

Մեծ ցաւով միայն հմայ իմացայ՝ որ
Նորին Սրբազնութիւն Թորուու Գուշակեան
մեռաւ է: Իրեն անձամբ ճանշայ երբ
Պահիքէ կը գտնուէք, եւ իրեն հետ թըլ-
թակցութեան մէջ էք: Վասահ եղէք՝ որ
հայ ազգին ցաւակից եմ. եւ Dr. Lepsius
Օրինակ մէջ կ'աշխատիմ և հայ ազ-
գին ճակատագիրը լաւ կը ճանչնամ: Ես
1931ին ձեր վանքին մէջ եղայ՝ սակայն այն
առեն նորին Սրբազնութիւնը գեռ հոն ե-
կած չէք: Իւր վերջին նամակը գեռ իմ
առջես կը գտնուի, բայց այլք ինքն պա-
տասխան չեմ կրնար զրել: Հայկական պա-
տրիարքութեան իմ յարգանաց հաւաստի-
քը մատուցանելով մնամ Զերդ

ԳՈՒՅ. ՀՀԴՅԵԼ

(Հայիսոն վերանահի՝ որ իր ձեռնով
գրած է այս հայերէն նամակը:)

(Ուղղուած Տ. Մկրտիչ Սրբազնին)

Նոր-Զաւրա, 27 Փետ. 1939

Իրանա-Հնդկաստանի թեմի Հայոց Կրօ-
նական Խորհուրդու սրտի խոր կակիծով ող-
բում է Ամենապատիւ Տ. Մորգու Սրբա-
զան Պատրիարքի գառնակիծ մահը: Նա
մէջն էր հայ հոգեորականութեան այն կար-
կառուուն և փայլու գէմքիրից, որ միշտ
խորապէս գիտակցելով իր պաշտօնի գե-
նութեանն ու լրջութեանը, անձնուէրօքէն
ծառայեց Հայ նեղեցու և Հայ ժողո-
վըրդի շահներին, ի սպաս գնելով իր լա-
ւագոյն ոյժերը: Նա յատկապէս իր պատ-
րիարքութեան ժամանակաշրջանում կա-
ռողացան Ս. Յակոբեանց վանքի հմայքին
էլ աւելի փայլ տալ և միաժամանակ երու-
սաղէմի վանքի ու Սրբատեղիների աւան-
դական իրաւունքները պաշտպանել թէ:
Հայ ժողովրդի և թէ օտարների առաջ:

Նեխնք և այն, որ երջանկայիշատակ
Պատրիարքի սրտին մօտ էր Իրանա-Հնդ-
կաստանի թեմի նոգեոր և բարոյական բար-
գաւաճման գործը նա Հնդկաստան և Զաւ-
րակարած. իր այցելութեան շրջանում իր
ոգեշունչ, պերճախօս քարոզներով և ա-
ռինքող բնաւորութեամբ կարողացաց գը-
րաւել նոյն վայրերի Հայ ժողովրդին, ո-
րոնք մինչեւ օրս էլ առանձին երախտազի-
տութեամբ յիշում են նրա հմայիչ անունը:

Ահա թէ ինչո՞ւ Ասեան ժամանակցում
է Զեր և Միարանութեանդ տիրութեանը,
և Զեր հետ միասին ողբում նրա անդար-
մանելի կորուսոր և նորհուրդ միաժամա-
նակ ամբողջ հոգով մազթօւմ է թէ Սրբ-
րազնութեանդ և թէ Միարանական Ուխտիդ
երկնային սփոփանքն ու միիթարութիւնը,
յուսալով, Ս. Յակոբեանց Առաքեական Ա-
թոռին կը բարձի մի արժանաւոր յաջորդ:

Հնդունեցէք մեր որդիական ամենա-

խօսնական Խորհրդի անդամք
ԿԱՐԱՊԵՏ Ա. ՔՃՆՅ. ՔՈՒՄԻԿԵԱՆ
ՎԱՐԴԱՆ Ա. ՔՃՆՅ. ՏԵՐ ՎԱՐԴԱՆԵԱՆ
ԳԱՐԵԿԻՆ Ա. ՔՃՆՅ. ԿԻՐԱԿՈՒՍԵԱՆ
ՏՐԴԱՏ Ա. ՔՃՆՅ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

(Ուղղուած Պատրիարքարանի)

Բոլոսամ, 16 Մարտ

Մեծ ցաւով միայն հմայ իմացայ՝ որ
Նորին Սրբազնութիւն Թորուու Գուշակեան
մեռաւ է: Իրեն անձամբ ճանշայ երբ
Պահիքէ կը գտնուէք, եւ իրեն հետ թըլ-
թակցութեան մէջ էք: Վասահ եղէք՝ որ
հայ ազգին ցաւակից եմ. եւ Dr. Lepsius
Օրինակ մէջ կ'աշխատիմ և հայ ազ-
գին ճակատագիրը լաւ կը ճանչնամ: Ես
1931ին ձեր վանքին մէջ եղայ՝ սակայն այն
առեն նորին Սրբազնութիւնը գեռ հոն ե-
կած չէք: Իւր վերջին նամակը գեռ իմ
առջես կը գտնուի, բայց այլք ինքն պա-
տասխան չեմ կրնար զրել: Հայկական պա-
տրիարքութեան իմ յարգանաց հաւաստի-
քը մատուցանելով մնամ Զերդ

ԳՈՒՅ. ՀՀԴՅԵԼ

(Հայիսոն վերանահի՝ որ իր ձեռնով
գրած է այս հայերէն նամակը:)

(Ուղղուած Տ. Մելքոնակ Սրբազնին)

Հալէպ, 16 Փետ.

Ս. Պատրիարք Հօր յեղակարծ մահուան
գոյցը շանհաւարեց մեզ ընտանեօք: Ի՞նչ
է արգեօք նախախնամութեան նպատակը
որ երեք չորս տարիներէ ի վեր՝ առնելով
մեր պատուական եկեղեցականները՝ կը խո-
ցուոէք արգէն խոցոտուած ու տառապած
հայութիւնը: Մանաւանդ մեր ընտանիքին
խոր վերաբեր որոնք տակաւին չէին մոխ-
րուած աւելի եւս բռնկեցան մահամարթը՝
լուսանոցի կենացից հմուտ և անզուգա-
կան ուսուցչին, որուն մեզի հանդէպ ու-
նեցած գուրգուրոս վերաբերմունքը, մեղ
շնորհապարտ ձգած էր միշտ: Այս, երանի
թէ մենք ալ հոն ըլլալով մեր գառն ար-
ցունքները թափէինք մեր պատուական և
շատ սիրելի Ամենապատիւ Հօր շիրմին վրայ:

Սրբանց կը խնդրեմ բարեգութ Աս-
տոււմէ որ Զեր Գերապատուութեան չնոր-
է երկար կեանք ու ֆիզիքական առողջու-
թիւն, որպէսզի Ս. Յակոբայ Միարանու-
թիւնը բոլորովիլն չի որբանայ և մենք՝ հայ
ժողովուրդը՝ միշտ վայելնք Զերդ Սրբազ-
նութեան հովանաւորութիւնը:

Յայտնելով մեր անկեծ ցաւակցու-
թիւնը, ակնածանօք կը համբուրենք Զեր
Գերապատուութեան Ս. Աջը:

Երեցին Տ. Ն. ԹԱՎՈՒԳՆԵԱՆ

Կուտամբ սօրեւ ցուցակը մնացեալ ցաւակցական նամակներուն զգա ամբողջութեամբ զետեղի այս բիւին մեջ անկարելի եղաւ, տեղի սղութեան պահառով: — Մըրբոց Յակոբեանց Միաբանութիւնը իր խորին օնորակալութիւնը կը յայտնէ բոլոր Յարգինի Նամակադիրներուն եւ կը հայցէ աստուածային օհնութիւմ անոնց համար:

Ա Մ Ե Ր Ի Կ Ա Ս Ծ Է Ն . —

Դերենիկ Վրդ. Փօլատեան .
Մ. Թովհ. Սկրտիչ Հայց . Առաք. եկեղեցւոյ Հոգաբարձութիւն՝
Վահան քահանայ ձէլալեան .
Մատթիէս Ա. քահանայ Հէքիմեան .
Յարութիւն Ա. քահանայ Թումայեան .
Հոգաբարձութիւն Հայց . Առաք. Մ. Խաչեանից՝
Վահրամ Մ. Վ. Նազարէթեան .
Ա. Ա. Գետիկեան :
Վահան Մ. Քիւրքճեան .
Կողնակի Խմբագր., Խ. Կ. Պէննէսան .
Կ. Պ. Ատանալեան .
Գր. Հ. Գալուստեան .
Միկրդատ Յ. Թիրեալքեան .
Հայ Լուս. Եկեղեցոց . Միութիւն՝
Ասենապետ՝ Ե. Քէշիչեան .
Ասենադպիր՝ Պ. Զինչինեան .

Ա Ն Գ Լ Ի Ա Ծ Է Ն . —

Արշակ Սաֆրաստեան .

Ա Ն Ի Ւ - Ց Ո Ր Ա Ծ Է Ն . —

Վ. Պ. Գասթանեան .
Բասէյֆայիներ .

Գ Ե Բ Մ Ա Ն Ի Ա Ծ Է Ն . —

Եղիշէ քահանայ Խթիւճեան .
Արտաշէս Արեղեան .

Ե Գ Ի Պ Ց Ո Ս Է Ն . —

Պատկ քահանայ Խայկեան .
Մեսրոպ քահանայ Քէսէկէրեան .
(Եկեղեցաւը Հայ Տիկնանց Միութիւն).
Մեթր Շաւարձ Ակյօնքեան .
Ա. Ալպօյաճեան .
Տօքթ. Շաւարձ Մելիքչան .
Մաթիլ. Ս. Պայլճճեան .
Մ. Պայլճճեան .
Ս. և Զ. Մանիսալեան .
Գալուստեան Արգ. Վարժարանի Տնօրէն՝ Կ. Նալբանդեան .

Նուպարեան Ազգային Վարժարանի Տը-նօրէն՝ Գ. Ֆիւրէկէրեան .

Եղիպտահայ Ռւսուցչական Միութիւն

Ատենապետ՝ Ղ. Ղազարոսեան .

Հայ Լէգէոնական Միութիւն

Ատենապետ՝ Լեւոն Պույումճեան .

Ատենադպիր՝ Յ. Ապանեան .

Ա. Դուրենան .

Հ. Ամբիրեան .

Զաքոսանիքներու կողմէ .

Հ. Կ. Պարոնեան .

և Հայ Արիներու Միութիւն», Գափրէի

Մամաճիւղ. Ընդհ. քարտուզար՝ Ներսէս .

Ընթիրցարահ Ավերածնունդ» Հայ Ե-

րիտասարդաց Միութեան Վարչութենէն՝

Ներսէս Ղազիկեան .

Ի դիմաց Տիկնանց «Այժմեմիկ» Միու-

թեան՝ Ատենապետուհի՝ Վ. Գրիգորեան .

Ատենադպրուհի՝ Լ. Քէստէքեան .

Թրգմաց. Վրժ. Բնօրէն՝ Վ. Արծրունի .

Յ. Ա. Յովսէքեան .

Ե Թ Ո Վ Պ Ի Ա Ծ Է Ն . —

Ցովհ. քահանայ Կէվէրեան .

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա Ծ Է Ն . —

Գէորգ Արքեպս. Ասլանեան .

Ոսկի Արքալայ Թէրզեան .

Կորիւն Քնյ. Շահինեան .

Աւազ Սարկաւագուհի Ալաւնի մայրա-պետ (Թալֆանեան աղջկանց որբանոց) .

Լեւոն Միհրանեան (Անոր Լուրժի խըմ-բագիր) .

Ի Բ Ա Վ Է Ն . —

Եղիշէ քահանայ Համբարձումեան .

Մեսրոպ քահանայ Թըջանեան .

Յ. Յակոբ Առաքելեան .

Խաչիկ Յ. Կ. Վանանդեան .

Արշակ Խաչատրուրեան .

Կարապետ Մելգոնեան .

Շերամ Բարուրեան .

Ի Տ Ա Լ Ի Ա Ծ Է Ն . —

Հրաչ Քաջարենց .

Թրգատ Գ. Տէմիրճեան .

Կ Ի Պ Ր Ո Ս Է Ն . —

Մելգոնեան Վրժ. ինդհ. Տնօրէն՝ Յ. Թօփճեան .

Վահե Վահեան :

Մեկգունքան Վրժ. ի Դիւանի Տեսուչ .
Մեկիքեան-Ռուզունեան Վրժ. ի Տնօրէն .

Հ Ն Դ Կ Ա Ս Ա Ն է ն . —

Վահան Քահանայ Մ . Ղարախանեան .

Յ Ո Ւ Ն Ա Ս Տ Ա Ն է ն . —

Պուկաս Քահանայ Ֆիլեան .

Տօքթ . Ա . Մ . Պարոնիկեան .

Պ Ա Դ Ա Ս Տ Ի Ն է ն . —

Հայկասեր Արելայ Տօնիկեան .

Յովհաննէս Քահանայ Միմոնեան .

Տօքթ . Վ . Բասգալ .

Յ . Ա . Գույումճեան .

Ի դիմաց Հայֆայի Հայուհեաց Միու-
թեան . Ատենապետուհի՝ Ե . Թօրեան .

Ատենապղուհի՝ Մ . Պօյանեան .

Յ . Յ . Մանիշակեան .

Պ Ա Ր Ա Կ Ա Ս Ա Ն է ն . —

Թէոդորոս Մ . Վ . Խասկակեան .

Պ Ե Լ Ճ Ի Գ Ա Ց է ն . —

Պրոփ . Ն . Արոնց .

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ա Ց է ն . —

Առաջ . Փոխանորդ Պուկարահայոց .

Գրիգոր Մ . Վարդապետ .

Թաղական Խորհուրդ Մ . Սարգիս եկե-
ղեցւոյ՝ Վրթանէս Քահանայ Փափաղեան .
Գէորգ Մեսրոպ .

Պ Ո Ւ Մ Ա Ն Ի Ա Ց է ն . —

Ներսէս Աւագ Քհնյ . Թերոբեան .

Ս Ո Ւ Տ Ա Ն է ն . —

Տիկին Մարի Գասպարեան .

Ս Ո Ւ Ւ Ա Ց է ն . —

Ի ադ Արք . Աջապահեան .

Տոգհ . Արք . Նազիկեան .

Դնէլ Արք . Ճէրէճեան .

Տ . Սահակ Քահանայ Պալեան .

Տ . Եղիշէ Քահանայ Տօղրամաճեան .

Լեւոն Ջէնեան .

Հ . Յ . Լ . Միութիւն , Պէյրութի Մաս-
նաճիւղ՝ Հմայեակ Գրանեան .

Կ . Արծրունի .

Ի դիմաց Նոր Մարաշի Մ . Քառ . Ման-
կանց եկեղեցւոյ Թաղ . Խորհրդոյ՝

Ատենապետ՝ Գ . Պատրիկեան .

Ատենապղիր՝ Յովհ . Գաղաղեան .
«Զարթօնք» Յովհաննէս Պօղոսւնեան .

Գէորգ Ն . Ներսոյեան .

Գառնիկ Մ . Դաւթեան .

Վահան Ռուզունեան .

Ի դիմաց Լիլի . Օգն . Խաչի Շրլ . Վարչու-
թեան՝ Ատենապետուհի՝ Զ . Շանթ .

Ատենապղուհի՝ Լ . Տէլ Մեկգունեան .
Ի դիմաց Զէյթունի Հայր . Աղքատա-
խնամ Միութեան .

Ատենապետ՝ Եղեկել Եղեկելեան .
Ատենապղիր՝ Նօխուտեան .

Համայի Հայոց Թաղական Խորհուրդ
Ատենապետ՝ Պ . Արզուեան .

Ատենապղիր՝ Լ . Նարպէյեան .

Ֆ Ր Ա Ն Ս Ա Ց է ն . —

Հ . Բ . Լ . Միութիւն , Վ . Մալէզեան .
Ա . Զօպանեան .

Տօքթ . Վ . Յ . Թորգումեան .

Գ . Կիրակոսեան .

Տիրան Թէքէեան .

Յանուն Մարսէլի , Լիոնի և այլ Հրանե-
ներու Գաղղիական բանակի լիգէնսակա-
նաց միութեան . Տիրան Թէքէեան (պատ-
ուսոյ նախազակ) :

Մ . Սահակ-Մեսրոպ եկեղեցիի կրօնա-
կան ընկերացիութեան վարչութեան կողմէ
Ատենապետ՝ Արամ Թէքէեան .

Կ . Կերտան .

Ը . Ասատուրեան .

Կ . Յ . Պասմաճեան .

Ա . Սարուխան .

Ի դիմաց Լիոնի և Շրջ . Ազգ . Միութեան .
Հոգ . Հովհիւ Տ . Գիւտ Քհնյ . Միքայէլեան .

Ի դիմաց Ազգ . Կեղր . Վարչութեան
Հարաւ . Ֆրանսայի՝ Յ . Պապիկեան .

Ատենապետ՝ Յ . Պապիկեան .

Ատենապղիր՝ Տօքթ . Յովհ . Միութիւն .

Միմոն Գրամաճեան .

Տիրան Սէֆէեան .

Դպրոցասէր Տիկինանց Միութիւն

Ատենապետուհի՝ Մ . Մինասեան .

Ատենապղուհի՝ Ա . Մ . Պօյաճեան .

Յ . Ա . Քասախեան Եղարաք .

Ի դիմաց Բարիգի Հայ Ուսանողական
Միութեան՝ Ատենապետ՝ Ե . Բէլթէքէեան .

Ատենապղիր՝ Բ . Եագուպեան .

PATRIARCHATUS LATINUS
HIEROSOLYMITANUS

Jérusalem, le 11 Février 1939

Excellence Révérendissime,

Nous venons d'apprendre à l'instant la mort de Sa Béatitude le Vénéré Patriarche de l'Eglise Arménienne de JERUSALEM. Nous tenons à Vous dire sans retard la part que Nous, et tout le clergé de Notre Patriarcat, prenons à Votre douleur, et à Vous assurer, Excellence, ainsi que tous les Membres de Votre Patriarcat, de Notre plus vive sympathie et de Nos condoléances les plus sincères.

Nous vous présentons, Excellence, Nos plus respectueux hommages.

François Fellinger
Evêque Auxiliaire, Vicaire Général

**CUSTODIA
DI TERRA SANTA**

Jérusalem, 11 Février 1939

Excellence,

Le décès presque soudain de Sa Béatitude, Mons. Thorgom Kouchakian, Patriarche Arménien de Jérusalem, me cause à moi personnellement ainsi qu'à tous les Religieux de la Custodie, une douleur inconsolable. Le deuil du Patriarcat Arménien est le deuil de la Custodie de Terre Sainte.

Je me rappelle, avec une particulière émotion, les paroles que Sa Béatitude Monseigneur Thorgom adressait hier même vers 10 heures du matin à mon Sécretaire au sujet du décès de Sa Sainteté le Pape Pie XI. Là encore, pour la millième fois, Sa Béatitude, par la part profonde qu'elle prenait au deuil du mond catholique, montrait la grandeur de Son âme et l'humanité supérieure de Son Esprit. J'aime à penser que Dieu, qui les

rappelait à Lui le même jour de la même année, à la seule distance de 14 heures, les ait accueillis dans Son Royaume le même jour et qu'une conversation céleste suivie au Ciel celle que Sa Béatitude tenait à Jérusalem au sujet de Sa Sainteté.

C'est avec cette pensée que je prie Votre Grandeur d'accueillir les plus vives condoléances de la Custodie de Terre Sainte.

De Votre Grandeur,
le très dévoué
Pr. Alberto Gori
Custode de Terre Sainte

**CHURCH OF ENGLAND
COUNCIL ON FOREIGN RELATIONS**

Gloucester, 14th February 1939

Dear Lord Archbishop,

As Chairman of the Council on Foreign Relations for the Church of England I write to express to the Armenian Church our condolences at the death of the Patriarch of Jerusalem.

The relations between the Church of England and the Armenian Church have always been of the most friendly character and we have heard of the courtesy that you have shown to English travellers and students when they are visiting Jerusalem. We desire therefore to express our great sympathy with your Church at the loss which it has sustained.

Your brother in Christ,

A C Gloucester
Bishop of Gloucester
CHAIRMAN

**ST. GEORGE'S CLOSE
JERUSALEM**

15th February 1939

Your Grace,

The news of the death of His Beatitude Thorgom Kouchakian has filled

me with deep sorrow as indeed it must have filled the hearts of all good men who knew His Beatitude, and in particular those of His own Convent and Flock.

His humility and dignity, His simplicity and reverence, His wisdom and knowledge, were qualities which could not fail to impress those who respected Him. His Beatitude showed me every consideration and drew out my love towards Him by His own personal kindness as well as by those qualities which are characteristic of great men.

The hammer blows of God strike at the right place and time in the erection of the building which is being "fitly joined together". His Beatitude built earthly churches and places of learning, and gave of His best. Now He has returned to Him Who is the giver of all.

In these dark days, when the cup of sorrow in the Holy Land seems to be overflowing, we must drink it and, in doing so, realize that the cup is His and that our care is His cure, and there must be no complaint or questioning.

The beloved Patriarch has finished His task and takes His place in the eternal dwelling.

Believe me to be,
Yours faithfully,
George Francis

Bishop of the Church of England
in Jerusalem

**HIGH COMMISSIONER
FOR PALESTINE
JERUSALEM**

11th February 1939

Your Grace,

I have the honour to convey to you and to the Armenian community on behalf of myself and the Government of Palestine my sincere sympathy in the

sad bereavement which you have sustained by the death of His Beatitude the Armenian Patriarch.

I have the honour to be,
Your Grace's
obedient servant,
Sir Harold Mac Michail
HIGH COMMISSIONER

**CHIEF SECRETARY'S OFFICE
JERUSALEM**

11th February 1939

Your Grace,

I have heard with great regret of the death of His Beatitude the Armenian Patriarch. Will you please accept my most sincere sympathy in the sad bereavement sustained by yourself and by the Armenian Community.

Yours sincerely
W. D. Battershill

**DISTRICT COMMISSIONER'S OFFICES
JERUSALEM DISTRICT**

11th February 1939

Sir,

It is with deep regret that I learn of the death of His Beatitude Thorgom Kouchakian, Armenian Patriarch of Jerusalem.

As Your Grace is aware I had the pleasure of knowing him before he was elected to this high office and I have seen him with wise counsel directing the affairs of the Armenian Church and so can in some measure appreciate the sense of your loss and I venture to express to your Grace, his clergy and members of the Community my deep condolences.

I have the honour to be,
Your Grace's obedient servant,
E. Keith-Roach
District Commissioner

**CHURCH MISSIONS TO JEWS
CHRIST CHURCH, JERUSALEM**

February 13, 1939

Dear Father Cyril,

On behalf of our Church Council and members of our congregation, as well as of our school and other friends of yours here, I am writing to express to you and the Armenian community our sincere condolences with you in the loss you have sustained through the death of your Patriarch.

I have not forgotten the deep impression of saintliness and scholarship which His Beatitude made upon me during the one visit which I was privileged to pay at St. James'. We share with you in your loss and pray that you and your people may be consoled and strengthened in this time of sorrow. You and we can look forward to the day when we shall be re-united with those who have joined the Invisible Church.

Will you please convey this expression of sympathy to the Locum Tenens or whoever is responsible?

Believe me

Yours sincerely,
H. W. L. Martin

**CENTRAL COUNCIL (VAAD LEUMI)
OF THE JEWISH COMMUNITY OF PALESTINE**

February 13, 1939

Messieurs,

On behalf of the General Council (Vaad Leumi) of the Jewish Community of Palestine, I beg to express our heartfelt sorrow and regret at the death of the Armenian Patriarch and Archbishop, Thorgom Koushakian. The Jewish Community of Palestine humbly offers its consolations to the Armenian Community of Palestine, and to Armenians the world over, for the irreparable loss of so outstanding a personality.

I have the honour to be,
Messieurs,
Your obedient servant,
Executive of the Vaad Leumi

**CENTRAL AGUDATH ISRAEL
JERUSALEM**

12th February 1939

Dear Sirs,

We read with profound grief of the demise of His Beatitude the Armenian Patriarch, Archbishop Thorgom Koushakian.

Please hand over on our behalf, our sincerest sympathy in your mourning, to all your Community.

Very sincerely yours,
M. Glikman Porush

الجُلُسُ الشُّرْعِيُّ الْإِسْلَامِيُّ الْأَعْلَى

الْقَدِيسُ الشَّرِيفُ

الجُلُسُ الشُّرْعِيُّ الْإِسْلَامِيُّ الْأَعْلَى
صاحب النبطة والسيادة الجليل القدر، چورغم کوچاکیان
بطربیک الطائفه الازمنه
وبهذه المناسبه يقدم تعازيه الحاره لبيته الاكليروس
المبعول وبلج الطائفه المختمه
الجُلُسُ الْإِسْلَامِيُّ الْأَعْلَى

Ցաւակցական Նախակներ ղրկուած էին
նաեւ՝ Տանիական, Լաղութեական, Իրանտ-
կան, Թրքական և Բոլոնիական Հիւաստու-
ներէն։ — Եաֆայի Կեդրոնական Դեղաբանէ,
Դաղիթ Հայիֆա և Որդիք յանձնառուներէ,
Պաղեստին-Եգիպտական Վաճառականական
Ընկերութենէ, Զօթէլ սերտափառ Ծնօրէ-
նէն, Տօքթ. Հէլլմութ Մենքէ, Քուրտ
Մէյէն, Հէրման Գոհէն փաստաբանէն,
Երբայական Համալարանէն, Ժօղէվ Ֆիւըր
Մէքենագործական տունէն, Թէֆիր Աղալ-
լահէն, Թապայի (Տիբերի) Գերմանական
և Հոռպիս սէն, Երբայական Համայնքի Էնդէ.
Վարչութենէն։

ԲԱՀՄԱՆ ՈՒԹՈՐԵՔԸ

Ամսոյն 19-ին, Մրգազան չօր բարձրան Ռոբութին, ամրոջ Միաբանութիւն և ժողովական խմբին զեղացման ազիցին Ռոբութի ազգացը կատահու համար: Պատուեցան հոգեհանգիս Մրգազանի հաղակային փայ: Հին յեասակին՝ Լուսահոգի Մրգազանին՝ անզան մը եւս յուզմունքով իցրուցին ամենուն փայեր:

Կերեկմատէ դրանք Միաբանութիւն կու Պատ. Տեղական Մրգազան չո՞ծ մը, որ Մեծ Կորուսէ ասդին անհնացնա վիճակ մը ունեցած է: Ընդունեց Միաբանութիւնը ցաւակցարիւնը բարիմ կը յորդեց ամենը որ գօտանդուն յշաականին Մեծ Մրգազանին եւ աւելի փորոք իւ լրացրեան փայրին հերեց պարտավանութեան եւ այս մեծ գործին՝ զօր Լուսահոգի Մրգազանը, եւ յր Մեծանուն նախառոյ սկսան Ս. Ցամարյա փանին մէջ:

ՔԱՌԱՍՈՒՆՔԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Նախապէս եղած կարգադրութեան մը համեմատ, մեծ պահոց Զ. Կիրակին ամբողջութեամբ յանկացուեցաւ Լուսահոգի Մրգազանի մահուան բառասունքի պատօնին: Առաւոտ՝ հանգստեան Ս. Պատարագ մատուցուեցաւ Մայր Տաճարին մէջ. պատարացեց Հոգ. Տ. Գեղարդ Վրդ.՝ եղիսիապոսական բարզու եւ գաւազանով, բարողեց Հոգ. Տ. Արքուն Վրդ.՝ «Անաւասի իր գեղի իրեւ զսին եւ կարիք բնաբանին ուուրջ. փխանդեց Ենեմիա մարցարէին այս խօսք մեր իրականութեան մէջ յանձնին Թորգոն Մրգազանի. ըստ քի խայէի պատմութեան մէջ Ենեմիան եւ իր նաևները եւ կարէ սինեն եղան, որոնք իրենք մէին լուսով, նոգիին կրակով, եւ նրկարագրի ամոռութեամբ սերուելնեն առաջնորդեցին: Մեծ ալ իր ազգ եւ կեկողեցի զուրկ շենք մնացաւ այդ սիներէն մեր գորաւոր մօսայոց իեանին մէջ, որոնք մեր ցեղի գոյութեան յեանանեներ եղան: Թորգոն Մրգազանը, յարեց, մին եր այդ սիներէն, եւ են ամոռուներէն որ այսպէս եղերականուն կը փի: Թեղեցի կերպով վեր հանեց Հանգուցեալիք եկեղեցական, առաջնորդական, գրական եւ ուսուցչական դերը մեր Վերջին կիսամարտեան շշանին: Ապա իր բարզման ամբողջ Միաբանութեան, տրագին յայսեց քի պիտի շարունակուի Դուռեանին եւ Գուակիանի գործը, ատիկա կը զզայ անոնց գալափարներով սնած եւ տոգորուած ամբողջ Միաբանութիւնը: — Պատարագն վեր տեղի ունեցաւ հոգեհանգստեան պատօնին նախագանութեամբ Պատ. Տեղապահ Տ. Մեսրոպ

Ս. Արենապա.ի, սրտառուչ եւ տպաւորիչ վեհուրեան մէջ:

Ժամը 11 ին, ամբողջ Միաբանութիւնը՝ Փառ. աւալիերութեան նես բարոց կազմած եւ երգինով Դուռեան պատրիարքի անք զիս տանիս գեպի Խորդանակ եւրուածք, որ այլու արժեկները ոգեկոչող եղերեր մ'եղած է, գերեզման զայրին ուր եւս կատարուեցաւ հոգեհանգիս, որու վեր Ս. Գրիշի զաւիրին մէջ տեղի ունեցաւ սրտառուչ հանդիսուրին մը: Աւետիք Մրկ. կարգա Լուսահոգի Սրբազնի յիշաակին ծօնուած իր եւրուածքը (էջ 144). Եղուցան Ե. Դուռեան պատրիարքի «Խաչը ենաչը եւրուածքը: Միաբանութիւնը եւ ծողպանիք գարձան փանին նոյն եւրաւածքի ամբողով բաւու եւ հանդիսաւուր:

Նոյն օրը կեսուն վեր կատարուեցաւ Սպահանէսք Փառ. Վարժարանի խաչանեւ սրահին մէջ, նախագանութեամբ Պատրիարքական Տեղապահ Ս. Հօր: Նետկայ ըլլալու փարայած եւ ընտրանի բազմութիւն մը յատուկ հետարերվ: — Լուսահոգի Մրգազանին կենցանագիրը ենթուած ուր շարառով եւ բարտ ոսերով կախուած եւ դիմացը, ամպինը ծածկուած եւ սեւով:

Սպահանէսք բացաւ Փառ. Վարժարանի տեսուչ Հոգ. Տ. Եղիէկ Վրդ. Տիրտերեան, «Յուղ զումով եւ որ կը կենամ հոս, ըստ, իր յիշաատակով օծուն այս շշավալյին մէջ, կատարելու համար զմնակ պատրէ այս սկաւուր արարութեան, կը զգամ քէ չմի իրենա զգացնել այս մեծ սուզր բոյոր անոնց որոնի եկած են որդիական պատկառանենվ եւ միրով կենալու իր սուզին առջեւ: Այդ սուզը կը խորանայ մանաւանդ երբ կը լուսաւորուի իր մեծութեան եւ արժեկներու կորուսին զգացումովք:» Հասու նոյնպէս քէ օմեն սոզգովին առա բան կը պատրիւն այս մեծ մարզուն, բայց դժբախասարա այդ պատրէ անվեար մեաց. եւ այս կարգի տիուր պատիհութեամբ միան կը սեւեռուին իրեն. այս եղած է նախագանէսքիրը բոյոր մեծ մարդոց, անոնք մոռացած են ինձնինենին իրենց զորձին մէջ.» Վերջացուց իր խօսք ըսելով բառերը կը զաւեն ինդի, երբ կը փորձեմ ձեզի փօխանցեն այն կսկիծը որով կը րբրայ Միաբանութեան հոգին, այս անփախարինելի կորուսուովը. այս խօս ցաւով եւ զիտակցութեամբ կ որ կը բանամ այս սուզի հանդէսը:

Յունեկայս երգուեցաւ «Տեր կեցո» պազային մազրերգը Փառ. Վարժարանի երգի խումբի կողմէ, որ կը ղեկավարուէ Կարապետ Մրկ. Միաբանութեան:

Առաջին բանախօսն էր Տ. Կիւրեկ Վ. Րդ. Խայմյեկեան, որ ենթայացուց կրօնառոր Լուսահոգի Մրգազանի մէջ: Հասր քէ աժորցու Մրգազան իրեւ կրօնաւար, ամենափոնաւոն ատահնաներէն մինչեւ բարձրագոյն զարարները իր ասպարեզին, եղած է եկեղեցականի կատարեալ ժիպարզը՝ դրուածեց զայն իր առաջնորդական, նութեակի, եւ պատշարքական պատօններուն մէջ, մասրամատ զանահանածն ընելով այս մարգերուն փայտ անու եկեղեցականի գործին եւ արդիւններուն: Բանախօսը Հնդկատասանն նախշացն էր սիրով կապրուած էր Լուսահոգին, բաժնենով յետոյ Մրգազանին երազը. համեմեց իր բանախօսուրինը անձնական դրուագենով:

Եղուուցաւ ենածայն «Որ յանից» հանգստան շարական: Ապա բանախօսնց Պ. Յ. Յ. Օսական, որ ենթայացուց Մրգազանին մէջ գրակէր: Բանախօսը հանդէսին բերաւ հայ գրականութեան սուզը: Աղբայա Հանգուցեալին մէջ արծեկաւուր բանաստեղծը, մեծ կենսազիրը, որուն այս սերի գործերը կորոզական պիտի մենան: Հասր քէ ինչ որ կը մենա մեզի իր գրչէն, կնիքին տակն է մեծ եկեղեցականի իր ունչին: Իրեւ նենալազ խոսնդանեցաւ քէ անիկա մեր մեծածոյն գրագէններէն էր: Զգացուց կակիծ այս անվետուղարձ կորուսին, եւ ինչ որ ամեննեն տեին ողբաց, եւ իր կարծիքով անդարմանինի գտաւ, ան ալ մեր սրբազան մատենացուրեան կրած ծանրազոյն հարուածն էր:

Խոսմբը եղցեց «Ալիսանացուրիւն»: Եղուուց բանախօսը եղաւ Պ. Յ. Պետրեան: Ենթայացուց ուսուցիչը է պերախօսը Մրգազանին մէջ: Հասր քէ Միւրգազանը խոսի մարդը եղաւ, զի կը հաւատար խոսի հեաչին. խոսի իրեն համար աշխարհներ ստեղծող Ասոււնոյ Բանն էր, եւ ինք իր բովանդակ կեանին մէջ այդ բանին իշխանը եղաւ, անով առաջնորդեց հոգիները: Իսկ իրեւ ուսուցիչ՝ ան ոսանձնեց այդ դերը իր ամեննեն բառակ հասկացողութեանը մէջ, հաւատաց անեւ կըրութեան հրասէին, ինչպէս հաւատացն էր իր մեծ վարդապետը Դուռեան: Ըմբռնելու համար իրենց այս կեցուածքը ուսուցիչը ստուգի մէջ տեսաւ ամեննեն բառակ հասկացողութեանը մէջ տեսաւ: Հանգուցեալ Մրգազանը անու հաւատարին ու հրայրէն սպասարկուն եղաւ, մօտենարկ մեր ցեղի մեծ ուսուցիչներուն, Սահակ-Մեսրոպին ողիին: եւ վերջացուց իր խոսմբ բախով, «Մրգազանը այմծ կը միանայ մեր երանաւորի մեծ վարդապետներուն նոյին»:

իրեւ ազնուագոյն ուսուցիչներէն եւ խօսողներէն մին այս ժողովուրդի սրբազան զգացումներուն:»

Եղուուցաւ առ վերինն երաւաղիմէն մաները:

Ապա արտասանուեցան էջեւ Լուսահոգի Մրգազաննեն. ա) «Անձինք նորինազգու(«), զոր արտասանն ժամանաւուր Կուրապես Մկրտչեան. բ) «Եկուր վիշն(«*) արտասանն Երամիկ Մրկ. Ղաղաքանն:»

Վերցին ենրուածը մեներգուուցաւ Կարապես Մրկ.ի կազմէ. զամանուուած՝ Շ. Պեղակերեանն:

Փակիսն խօսն բրաւ Պատր. Տեղապահ Գեր. Տ. Սեւորու Մրգազան, որ տնօրինական լուրին յայտնելու վերջ օրուան բանախօսներուն այս առաջրով արտայացն իրենց գեղեցիկ եւ սրագին խօսերան համար, եւ հանգիսականներուն, որոնք յարցանելով եղած էին բաժնեներու Միքանուրեան սուզը, որ իրենցն ալ էր, դրաւատիք բրաւ Հանգուցեալի բարձր արժանիններուն, ներկայացուց այն պարապա որ Մրգազանի մանով կը զյանայ: Հասր քէ այս համախմբութիւնը միքարաւութեան առիք մը ըլլային աւելի, խանգալավան կեցուածք մը պէտք է ըլլայ իր մով մարմնաւուուած զալափարաներուն: Հանգուցեալը կ'սպասէ որ շարադանակ կը զյանայ: Հանգուցեալը կ'սպասէ որ շարադանակ կը զյանայ: Այս յարաջադրութեամբ եւ զգացումով միան մենք կամարած կ'ըլլային մեր դոյլն պարտէր իւ նկամամբ, եւ այս կերպով միան պիտի հրեայ ամսուիլ սուզը այս Հասատուրեան եւ բոլորի հօգիններուն մէջ:» Յետոյ մաղրանելով եւ այլորով փակեց սուզը հանդեսք, որուն քրպաւուրեան խորոնկ էր ընտեալ ներկանեան մէջ: Այս սպասուութեան ամեննեն յուսագրիչ որքան սրայոյդ մասը կուզար Տեղապահ Հօր հասաւ կամեն, եւկու մեծ պատրիարքներու սկիզբ բրած եւ բեզիւսուրած հոգինեան, կրական եւ զրական գործին անհափան շարունակումը իր առաջիւններէն, զինքը սիրովուր միանաւուած շամեներուն եւ արտին ապաւինան:



(*) Մին, 1939 Թիւ 1 էջ 9:

(**) Մին, 1933 Թիւ 1 էջ 16: